ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

# ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

## «ՔԱՂԱՔԱՑԻ Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 1217-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՏԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. Հետաձգել սույն գործի դատաքննությունը եւ որպես դատավարության մասնակից ներգրավել փորձագետի:

2. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի հիման վրա սահմանել փորձագետի եզրակացություն պահանջող հետեւյալ հարցերի շրջանակը.

ա) ժառանգական իրավահարաբերությունների առումով որքանո՞վ է իրավաչափ համահայր կամ համամայր քույրերին եւ եղբայրներին դուրս թողնելը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 72-րդ գլխի իրավակարգավորման շրջանակներից,

բ) միջազգային իրավունքի եւ ՀՀ միջազգային պարտավորությունների շրջանակներում արդյո՞ք խտրականության դրսեւորում է համամայր կամ համահայր քույրերի ու եղբայրների եւ միեւնույն ծնողներից ծնված երեխաների գույքային իրավահարաբերություններում տարբերակված մոտեցման դրսեւորումը:

3. Որպես փորձագետ ներգրավել ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի քաղաքացիական իրավունքի ամբիոնի վարիչ, ի.գ.դ., պրոֆեսոր Տարիել Բարսեղյանին:

4. Փորձագիտական եզրակացության ներկայացման վերջնաժամկետ նշանակել 2010 թվականի օգոստոսի 15-ը:

5. Գործի դատաքննությունն սկսել 2010 թվականի սեպտեմբերի 18-ին, ժամը 14.00-ին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ — Գ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

22 հունիսի 2010 թվականի
ՍԴԱՈ -69